տայ Նեղոսն է, որի բազմաթիւ ճիւղերի վրայ, մինը միւսի մօտ, շարուած են մեծ եւ փոքրիկ գիւղեր, որոնց գեղեցիկ երեւոյթը ամենեւին չէ համապատասխանում աղքատ բնակիչների անմխիթար վիճակին:

Սալմաստը որպէս հին ժամանակներում եղել է Հայաստանի բազմամարդ գաւառներից մէկը, եւ այժմ նրա բնակիչների մեծ մասն բաղկացած էին հայերից: Մնացեալ ազգաբնակութիւններին պատկանում էին թուրքերը, հրէաները, ասորիները եւ քրդերը, — այդ բոլորը միասին վեր առած, հազիւ թէ հայերի կէս մասին էին հաւասարւում:

Ամէն դար, սկսեալ խորին հեթանոսական ժամանակներից, թողել էր այդ գաւառում իր տիրապետութեան հետքերը: Այստեղ դեռ տեսնւում էին հին Զարեհաւանի հետքերը: Այստեղ ահագին մոխրաբլուրներ դեռ յիշեցնում էին մոգական ատրուշանները եւ սրբազան կրակի հազարաւոր տարիներով լափած նիւթերը: Այստեղ բարձր մինարեթներ իրանց գեղեցիկ մոզայիկներով ցոյց էին տալիս արաբաբոց տիրապետութիւնը եւ յիշատակը այն ազգի, որը ուր եւ իշխում էր, տարածում էր արհեստ, գիտութիւն եւ արիւն: Այստեղ դեռ մնացել էին բեկորները այն ամրոցի, ուր մեծ Հուլաւունը պահում էր իր գանձերը: Այստեղ զանազան լեռների եւ բլուրների բարձրաւանդակի վրայ դեռ մնում էին փլատակները մեծամեծ բերդերի, որպէս փշրանք աւատական իշխանների խորտակուած փառքի, որոնք իրանց բռնակալութեան ներքոյ ճնշում եւ խեղդում էին ամէն կենդանի զօրութիւն: — Իսկ այդ բոլոր հնութիւնների մէջ իմ ուշադրութիւնը գրաւում էր մէկը. դա Փիրչաւուշ լեռան ժայռերից մէկի վրայ քանդակած, պատմական մի անցքի տխուր նկարագիրն էր: Պարսպաձեւ ժայռի հարթած մակերեւոյթի վրայ դուրս էին բերուած մի քանի ձիաւորներ հնադարեան հագուստով եւ նոյնպէս նախնական զէնքերով: Մէկին գերի էին տանում: Նա թագաւոր էր: Ոչ մի արձանագրութիւն չէր ցոյց տալիս դրանց ո՛վ եւ ի՞նչ ժամանակի մարդիկ լինելը: Միայն հայ ժողովրդի մէջ պահուած էր մի ցաւալի աւանդութիւն. գերին Արշականեաց վերջին թագաւոր Արտաշէսն էր, որից յետոյ Հայաստանը ընկաւ պարսիկների իշխանութեան ներքոյ եւ կորցրեց իր թագաւորներին: Կարծես, այդ պատկերը, որպէս մշտական նախատինք, իր քարաժայռի բարձրութիւնից յանդիմանում լինէր հայերին, ասելով. «ահայ, ինձ նման միշտ գերի եւ ստրուկ կը մնաք դուք, որովհետեւ ձեր թագաւորին գերութեան մատնեցիք»...

Եւ իրաւ, հայ մարդու գերութիւնը եւ ստրկութիւնը իսկոյն նկատւում է այդ երկրում, երբ մարդ փոքր-ինչ խորին կերպով ծանօթանում է ժողովրդի կենցաղավարութեան հետ: Երկրի արտաքին կերպարանքը խաբուսիկ է, կարող է մինչեւ անգամ սխալանքի մէջ ձգել անփորձ հետազօտողին: Երբ